ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 26-Ա

«22» ապրիլի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՄԱՍԻԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ՝ «ԱՄԱՍԻԱՅԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 2-րդ կետի «զ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ և 64-րդ հոդվածների դրույթներով,՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համար՝ 46.21000083) և «Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» (պետական գրանցման համար՝ 46.21000082) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միաձուլման ձևով վերակազմակերպել և ստեղծել՝ Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի «Ամասիայի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն է և վերջինիս են անցնում միաձուլված իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 9 *Դեմ՝* *Ձեռնպահ*

Հարությունյան
Ղուկասյան
Վարդանյան
Ախցխեցյան
Զաքարյան
Աբրահամյան
Հարությունյան
Արսենյան
Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«22» ապրիլի 2022 թվական

գյուղ Ամասիա

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ամասիա համայնքի ավագանու 2022 թվականի
ապրիլի 22-ի թիվ 26-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՄԱՍԻԱՅԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (հետագայում՝ Կազմակերպություն) համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն, որը ստեղծվել է ֆիզիկական կուլտուրայի, սպորտի, մշակութային տեղեկատվական, կրթական գործունեություն իրականացնելու նպատակով:
2. Կազմակերպությունը ստեղծվել է «Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» և «Ամասիայի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման արդյունքում միաձուլման միջոցով և հանդիսանում է նրանց իրավահաջորդը:
3. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարը:
4. Կազմակերպությունն ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:
5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթղթեր և խորհրդանիշ:
6. Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, և սույն կանոնադրությամբ:
7. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
8. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ հիմնադրի պարտավորությունների համար:
9. Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:
10. Կազմակերպության անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

    կրճատ՝ «ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ >> ՀՈԱԿ

11. Կազմակերպության գտնվելու վայրը, փոստային հասցեն՝ 2701, ՀՀ, Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Ամասիա գյուղ, 26-րդ փողոց, շենք 4:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

12.Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի պարապողների առողջության պահպանում և ամրապնդում,

13.Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովում

14. Ընտրված մարզաձևում պարապողների սպորտային ընդունակությունների կատարելագործում

15. Հանրակրթական դպրոցների հետ կապի հաստատում և ֆիզկուլտուրայի արտադասարանական աշխատանքների, միջոցառումների կազմակերպման օժանդակում

16.Ազգային, արտասամանյան տպագիր արտադրանքի հավաքածուի պահպանում, համալրում, մշակում, գրադարանային, տեղեկատվական, մատենագիտական սպասարկման կազմակերպում, գրադարանների զարգացման գիտական և մեթոդական աջակցության ապահովում:

17.Ձևավորում և օգտվողներին է տրամադրում ազգային, արտասահմանյան տպագիր արտադրանքի հավաքածուն առանց սահմանափակումների՝ նրանց պահանջարկներին համապատասխան.

18. Իրականացնում է գրադարանային, տեղեկատվական-մատենագիտական աշխատանք, գրադարանից օգտվողներին տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն, ընթերցողներին մատուցում է գրադարանային տարբեր բնույթի ծառայություններ:

19.Իրականացնում է տպագիր արտադրանքի հավաքածուի համալրում ձեռքբերումների, նվիրատվությունների, գնման, փոխանակումների միջոցով, ինչպես նաև ՀՀ տարածքում հրատարակված ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված գրականության պարտադիր օրինակներով:

20.Հաշվառում, մշակում, համակարգում է մուտքագրվող նյութերը և գրանցում դրանց վերաբերյալ տեղեկատվությունը թղթային և այլ կրիչների շտեմարաններում:

21.Իրականացնում է տպագիր արտադրանքի հավաքածուի ամբողջականությունն ու անվտանգությունն ապահովող պահպանության համալիր միջոցառումներ (խնամք, վերականգնում, վերակազմում, բուժում և այլն):

22. Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար կազմակերպությունը՝

1) Համագործակցում է հանրապետական և արտասահմանյան երկրների առաջատար սպորտային և մշակութային կազմակերպությունների, կրթական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ,

2) Պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների կամ անհատների,

3) Կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման և այլ բնագավառներում:

4) Նոր բաժինները բացվում են ըստ բնակչության ցանկության, կազմակերպության տնօրինության կողմից, մանկավարժների և այլ անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

5) Կազմակերպությունում գործում են սկզբնական պատրաստականության,

ուսումնամարզչական, սպորտային կատարելագործման և սպորտային բարձրագույն վարպետության խմբեր:

6) Կազմակերպության ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի մեկից և գործում է ամբողջ տարվա ընթացքում, ապահովելով 51-52 շաբաթվա համար նախատեսված շուրջամյա մարզումներ, որոնցից 5-6 շաբաթը (համապատասխան միջոցներ ունենալու դեպքում) ամառային և ձմեռային սպորտային-առողջարարական ճամբարային պայմաններում:

7) Կազմակերպության կոնտինգենտի և ուսումնական խմբերի հրամանագրումը կատարվում է ամեն տարի մինչև հոկտեմբերի մեկը:

8)Ինքնուրույն է սահմանում կազմակերպության օգտվելու կարգը, օգտվողների կողմից պատճառված վնասի փոխհատուցման ձևերն ու չափերը, որոշում համալրվող գրականության տեսականին, մշակում հիմնական գործունեության ընթացիկ և զարգացման հեռանկարային ծրագրերը:

9).Հիմնադրի հետ համաձայնեցնելով իրականացնում է հավաքածուից օգտագործման համար ոչ պիտանի տպագիր արտադրանքի դուրս գրումը՝ բացառությամբ պատմամշակութային արժեքների:

23.Կազմում է իր զարգացման ծրագիրը, որոշում ծառայությունների մատուցման կարգն ու գները, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

24.Կազմակերպությունը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադիրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակները:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

25.Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

26. Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի

1) հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը (այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները),

2) կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

3) վերահսկողություն իրականացնել Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,

4) հայցով դիմել դատարան՝ օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը անվավեր ճանաչելու նպատակով

5) Օգտվել օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

27.Կազմակերպության հիմնադիրը պարտավոր է՝

1) ապահովել Կազմակերպության բնականոն գործունեությունը,

2) չհրապարակել Կազմակերպության գործունեության վերաբերյա գաղտնիք պարունակող տեղեկություններ,

3) կատարել Կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

4) պահպանել սույն կանոնադրության դրույթները:

25.Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

28.Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

29. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

30.Կազմակերպությունն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը՝ օրենքին, հիմնադրի որոշումներին և սույն կանոնադրությանը համապատասխան:

31..Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

32.Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

33. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

34. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

35. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որը նշանակվում է մրցույթի արդյունքներով:

36. Կազմակերպության տնօրենն օրենքով, հիմնադրի և սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը, կրում

է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի որոշումների ու կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

37. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և պետությանը պատճառված վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

38. Կազմակերպության տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի որոշմամբ ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը և ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) կատարում է պարտականությունների բաշխում իր տեղակալի (տեղակալների) միջև.

7) սահմանում է կազմակերպության աշխատակիցների իրավասությունները.

8) սահմանված կարգով հիմնադրին է ներկայացնում կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը.

9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով, իր լիազորությունների սահմաններում, արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

10) իրականացնում է կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի նախագծային, շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքներ.

11) հիմնադրի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության աշխատողների թիվը, ներքին կարգապահական և այլ կանոններ.

12) հաստատում է կազմակերպության գործունեության ծրագրերը.

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

39. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

40. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում, հիմնադրի որոշմամբ, տնօրենի լիազորություններն իրականացնում է տեղակալը կամ աշխատողներից մեկը:

41. Կազմակերպության աշխատողների աշխատանքային իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

42. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
43. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմավորվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
44. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
45. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
46. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բյուջե:
47. Հաստատությունն համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից: